

տանալով 6000 բուսի վճարել ու գրաւը ազատել. բայց յայնմանէ իւր հաւատարիմ Ապաղաներէն մէկը եօթը ընկերով պատանդ կեցաւ, եւ այնպէս Եօհանսօնը դեռ գերի մնաց՝ մինչեւ որ միւս կողմէն Չերքէզ գերիները գան. իսկ զօրապետին մարմինը տրուեցաւ որդւոյն, եւ նա այս միւրթարութիւնս ունեցաւ որ իւր մեծանուն հօրը մարմինը կատարինոտար բերած ատենը ուսկից որ կանցընէր՝ ամէն գեղերէն անթիւ ժողովուրդք եւ զինուորականք եւ եկեղեցականք արտա-

սուալից աչօք կգլխաւորէին զիրենք եւ հանգուցելոյն գովեստները կխօսէին յանկեղծ սրտէ։ Վերջապէս հոկտեմբերի 6-ին կատարուեցաւ նորա թաղման հանդէսը, եւ տասը օր տասը գիշեր եւս անցած լինելով՝ մարմինը դեռ ամենեւին այլայլութեան նշան մը չէր տուած։ Յայտնի է որ Յակոբ Քոխարեն, իոյն անունը Ռուսաց զինուորական պատմութեանը մէջ անմահ պիտի մնայ, եւ Չեռնոմոսի երկրին մէջ նորա ազնիւ յատկութիւնները անմոռանալի։

ՄԱՆՐԱՆՈՒՐՔ

ՌԱՐԻ ՀԻՐԵ ՏԵՆՆԷՄԱՐՔ.

Այս կարգէ գուրս յիշողութեան եւ թափանցողութեան տէր մարդը յիրաւի աշխարհիս հրաշալիքներէն մէկն է, արդէն շատ տեղքալած եւ խիստ շատ մարդկանց ծանօթ։ Մեք տարիներով առաջ ուրիշ գրուածքի մը մէջ ասոր վրայ համառօտ տեղեկութիւն մը հրատարակեր էինք՝ եւրոպական լրագիրներէն առնելով. իսկ այժմ՝ աչօք տեսնելով զինքը եւ իւր խելքէ մտքէ վեր թափանցողութիւնը, հարկ համարեցանք այս տեղ եւս յիշատակել։

Ռարբի Տեննեմարքը միջակ տարիքով Հրեայ մի է՝ Աւստրիոյ հրեաներէն։ Իրեն գլխաւոր ճարտարութիւնը, որ զանազան աներկբայելի փորձերով ստուգեցինք, այս երկու երեւոյթներուն վրայ է։ Նախ՝ ինչ գրուածք որ ձեռքը տաս, սրբան եւ մեծ լինի թերթին երեսը, մէկ նայուածքով մը անվրէպ կզրուցէ թէ այն երեսին մէջ քանի տող բան կայ։ Բայց այս այնքան զարմանալի չէ, վասն զի հաւանական է որ շատ մարդիկ եւս երկար վարժութեամբ այս նայուածքի արագութիւնը իրենց բնական յատկութիւն մը դարձընեն, ինչպէս որ քանի մը օրինակներ տեսած

եմք, թէպէտեւ նոքա այս ռարբին շատ պակաս արագութեամբ կհամրեն տողերը։

Երկրորդ եւ գլխաւոր ճարտարութիւնն է զարմանալի թափանցողութիւն մտաւոր տեսութեան, զոր կյայտնէ այսպիսի փորձերով։ — Ո՛ր եւ իցէ փակ գրքի մէջ, բաւական է որ հրեարէն լինի, ձեռքդ կզնես. մէկ երկու րոպէ մտածելու պէս բրած չըրած՝ կըսէ քեզի թէ սր մատիդ տակը ինչ բառ կամ ինչ խօսք կայ, թէպէտ եւ այն գիրքը՝ կամ դոնէ այն տպագրութիւնը ոչ երբէք տեսած լինի։ Եթէ գիրքը հրեարէն չէ, այլ ուրիշ լեզուով, այս միայն կզրուցէ թէ մատիդ տակը պարանի թէ կէս թէ ամբողջ տող կայ, կամ թէ մատդ դրած տեղէդ դէպի վեր ու դէպի վար քանի տող կայ, թէ մատիդ տակը ընկած երեսին, եւ թէ մատիդ վրայ եկող երեսին մէջ։ — Ասկից ալ աւելի զարմանալի փորձը այն է որ դեռ ձեռքդ գրքին մէջ չդրած, կըսէ թէ սր պիտի գնես, եւ ինչ խօսքերու վրայ պիտի գայ մատդ։ — Այս փորձերը թէ առանձին եւ թէ խալիպեան Ուսումնարանին վարժապետացն ու աշակերտացը առջեւն ըրաւ զարմանալի ռարբին, եւ զամէնքը յի-

բաւի հիացուց, ինչպէս որ զարմացուցեր է ամէն տեղ իւր փորձերը տեսնող ամէն աստիճանի մարդիկը:

Միաբը դրած է այս ռաբբին, եւ համարձակ ալ կըրուցէ, թէ ինքը ունի նաեւ կարողութիւն մարդուս կերպարանքէն հասկընալու ոչ միայն նորա բնաւորութիւնը, այլ եւ ապագան, այսինքն գլխուն գալիքը: Բայց մեք նորա այս կարողութիւնը փորձելու կամ ստուգելու առիթ չունեցանք, ուստի եւ երկբայիլը իրաւացի կ'համարիմք: — Ձեմք ժըխտեր՝ թէ իւր բնական եւ կարգէ գուրս թափանցողութեամբը ուրիշներէն շատ աւելի ճիշդ կրնայ գիտնալ գիմախտութեան արուեստը. բայց դժուար է մեզի հաւատալ՝ թէ այս կողմանէ իւր գիտութիւնը կամ կարծիքը անվրէպ եւ անսխալ լինի. իսկ թէ

ապագան կարող է գուշակել՝ իհարկէ ոչ որ կրնայ հաւատալ՝ մինչեւ որ զանազան եւ յայտնի ապացոյցներով չտեսնէ ռաբբին գուշակութիւնը կատարուած:

Այսու ամենայնիւ ռաբբի Տէննէմարբին բնատուր թափանցողութիւնը իրաւամբ ա. նուանել տուեր է զինքը «*Ջարմանալի մարդ*», եւ կարծէ որ բնախօս իմաստասէրները առանց քննութեան չթողուն այս անձին վրայ երեւցած կարգէ գուրս երեւոյթը: — Գուցէ ճիշդ քննութիւններով նմանութիւն մը գտնուի սորա թափանցողութեանն ու այն Երկրորդ *սէստրի* ըստած կարողութեան մէջ, զոր գիշերաշրջիկ կամ մագնիսացեալ անձինք կուսենան, եւ թերեւս նոցա իրենց թմրած կամ քնացած վիճակին մէջ տեսածները սա յարթ-նութեան կոտենէ:

ՕՏԵՍՍԱՅԻ ԿՐԱԿՆԵՐԸ.

Օտեսսայի կրակները մօտերս դադրեցան, եւ քաղաքացիք սկսան փոքր ինչ ոգի առնուլ: Ամիս մը կայ որ Օտեսսան ալ հրաբուխ ըսուելու արժանի քաղաքներէն մէկուն պէս բան մը դարձեր էր. 24 ժամուան մէջ մինչեւ հինգ կրակ պատահածը կար: Ջարմանալին այս է որ Օտեսսայի փողոցները լայն են, եւ տները քարաշէն. եւ սակայն թէ՛ դիպուածական եւ թէ՛ կամաւոր հրդեհները մեծամեծ վնասներ կրնէին: — Վերջապէս տէրութիւնը կրցաւ ձեռք ձգել չորս հոգի, որ իրենց բան ու գործը բաժնէին տներու կրակ տալը: Այս չարագործներէն մէկը՝ դեռ դատաստանը չկտրուած կմեռնի. երկուքը ծանր կերպով կ'պատժուին,

եւ չորրորդը՝ որ ամենէն աւելի պատժապարտ ճանչցուեր է՝ հրապարակաւ կ'սպանուի անհամար բազմութեան առջեւ՝ 12 հրացանի անոր վրայ պարպուելովը: Կըսեն թէ այն չարագործը մեռնելէն առաջ վեց օր վեց գիշեր ամենեւին բերանը բան չէ դրած եղեր: — Արդեօք նոյնպիսի՝ գոնէ բարոյական հրացանափարութեան պատժոյն արժանի չե՞ն նաեւ այն անզգամ մարդիկ, որ իրենց չար կիրքերը եւ վնասակար դիտաւորութիւնքը կատարելու համար՝ խռովութեան կրակը կուտան ամբողջ ազգաց եւ ժողովրդոց՝ լեզուով կամ գրով եւ տպագրութեամբ...

ԳԱՂՂԻՈՅ ՑԱՆՑԱՒՈՐՆԵՐԸ.

Գաղղիոյ մէջ բռնական աշխատութեան դատապարտուած յանցաւորներուն թիւը այժմ 7690 է կըսեն. ասոնցմէ մինչեւ ցմահ դատապարտուողներն են 1965 հոգի, մնացեալները՝ որը 5, որը 10, որը 20, որն ալ մինչեւ 50 եւ աւելի տարւով դատապարտուած են:

Գողութեան համար դատապարտեալն են 4750, սպանութեան համար 1027, կրակ ձգելու համար 233, սուտ ստակ շինելու համար 140, հայրասպանութեան համար 26, կամաւոր սնանկութեան համար 24, եւ այլն:

Ցանցաւորաց գրեթէ կէսը 20-էն մինչեւ 40

տարեկան երիտասարդներ են, 123-ը 16-էն մինչեւ 20 տարեկան պատանիք, 270-ը 60 տարին անցած ծերեր:

Կէսէն աւելին գեղացի է, 2452-ը քաղաքացի, 643-ը օտարական:

Կարգաւ գրել գիտցողներն են 2900 հոգի, չը գիտցողները 3992, եւ միայն 91-ը չափաւոր ու-

սում մը առած՝ ժողովրդական դպրոցաց մէջ:

Եւրոպացիք մեծ ուշադրութեամբ կնային այսպիսի վիճակագրական տեղեկութեանց վրայ, վասն զի ասով ըստ բաւականին կիսակրնան թէ ի՞նչ աստիճանի մէջ է բոլոր երկրին բարոյական վիճակը, յորմէ կախեալ է շատ անգամ նաեւ մեծամեծ ազգաց բարօրութիւնն ու թշուառութիւնը:

ՆՈՐԱՏԻՊ ԳԻՐԲ

Դ Ա Ս Ս Ե Տ Բ

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

Ս Ր Բ Ո Յ Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի Ն.

Ի ԹԷՌԻՈՍԻԱ, 1862.

Սուրբ Պատարագին խորհրդոյն եւ գլխաւոր արարողութեանցը տեղեկութիւնը թէպէտեւ քրիստոնէական վարդապետութեան էական եւ կարեւոր մասերէն մէկն է, բայց մինչեւ ցայժմ ասոր մէկ Դասատետըը պակաս էր մեր ազգին մէջ: Այդ պակասութիւնը յուսամք թէ ըստ բաւականին լեցընէ այս համառօտ նորատիպ գրքոյկը, որով կլինի արդէն հայաստանեայց ուղղափառ դաւանութեան այս մասին դասախօսութիւնը խալիպեան ազգային Ուսումնարանին մէջ:

Դիմն է 50 ֆոխ. արծաթ: